ԳԼՈՒԽ ԼԶ
ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԲԱՂԴԱԴԻ ՎՐԱ

Օսմանցիների Մուրադ թագավորը լսեց, թե մեռավ Շահ Աբասը և թագավոր նստեց նրա թոռ Սաֆին: Սա երեխա է և ոչ արի, ուստի զորք հավաքեց և հանձնեց Վազիր Խոսրով փաշային՝ արշավելու Բաղդադի վրա և գրավելու այն:

Եվ գնաց նա Եկբատան[92], որ Քիրմանշահն է, Համադան և Դարկաղին, բայց ոչինչ չկարողացավ անել, վերադարձավ գնաց օսմանցիների երկիրը և կամեցավ ձմեռել Թոխաթում[93] (Եվդոկիա): Մուրադ թագավորը լսեց, բարկացավ և ուղարկեց Մուրթուզա փաշային և սա կտրեց Խոսրով փաշայի գլուխը և ինքը գրավեց նրա տեղը:

ԳԼՈՒԽ ԼԷ
ՌՈՒՍՏԱՄ ԽԱՆԻ ՎԱՆ ԳՆԱԼԸ

Իսկ պարսից թագավոր Շահ Սաֆին լսեց Սուլթան Մուրադի արածը, ինքը նույնպես կամեցավ անել, ինչ որ նա արեց, ուստի հրամայեց զորք հավաքել և արշավել Վանի վրա: Նրանց գլխավոր նշանակեց Ռուստամ խանին, որ Թավրիզի իշխանն էր: Եվ երբ նա գրավեց այս իշխանությունը, հպարտությամբ մարդ ուղարկեց Երևան Թահմազ խանի մոտ՝ գալու միասին արշավեն Վանի վրա: Իսկ Թահմազ խանը խստությամբ պատասխան տվեց և ասաց՝ ես չեմ կարող գալ, նախ՝ որ շահից հրաման չունեմ և երկրորդ՝ որ երեք կողմից թշնամիներ կան Երևանի վրա՝ վրացիներից, քրդերից և օսմանցիներից, ինչպես երկիրը անտեր թողնեմ և գամ ծառայության մտնեմ, և չգնաց: Նաև ուղարկվածներին շուքով չընդունեց և անարգված վերադարձան: Այս պատճառով խիստ վիրավորվեց Ռուստամը և չէր իմանում ինչ անի, քանզի իր խոսքը չկատարվեց, այլ արհամարհվեց Թահմազի կողմից:

Եվ ինքը առավ զորքը, գնաց Շամիրակերտ[94], նստեց նրա շուրջը և սկսեց պատերազմել շատ օրեր և հասկացավ, որ չի կարող

գրավել, մտածեց փախչել: Զորքին հրամայեց սփռվել երկրում և ավարել ինչ որ կարող են մինչև երեք օր: Երեք օրից հետո վերադառնալ իր մոտ: Զորքը գնաց, կողոպտեց , ինչ որ գտավ և վերադարձավ նրա մոտ: Իսկ նա գաղտնի կանչեց բոլոր հազարապետներին և ասաց՝ դուք գաղտնի կանչեք հարյուրապետներին, սրանք կանչեն հիսնապետներին, հիսնապետները՝ տասնապետներին, այս վերջիններն՝ իրենց զորքերին, որ պատրաստ մնան այն նշված գիշերը փախչելու միաժամանակ, որ օսմանցիք չիմանան և բերդից ելնեն մեզ հետապնդեն ու վնաս տան: Եվ այդպես արին, ճրագները վառ թողին, որ օսմանցիք չկասկածեն: Եվ այդպես փախան միևնույն ժամին:

Հաջորդ օրը օսմանցիք նկատեցին պարսիկների փախուստը և հետամտելով չկարողացան հասնել, վերադարձան նրանց հանգրվանները և չգտան մի ուլունք անգամ, բացի ճրագներից:

Իսկ Ռուստամը գնաց Թավրիզ, գանգատ գրեց Թահմազի վրա և ուղարկեց շահին: Իսկ Շահը արհամարհեց նրան, նամակաբերներին ծեծով հետ դարձրեց, իսկ Ռուստամին մինչև սրա մահը արհամարհանքով էր նայում:

ԳԼՈՒԽ ԼԸ
ՄՈՐԴԼԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քանի դեռ կենդանի էր Ամիրգունա խանը, Մուրադ անունով օսմանցի մի մարդ զողության պատճառով մահապատժից փախավ և եկավ Ամիրգունա խանի մոտ և մեծարվեց նրա կողմից: Երբեմն սա պարսից (զորքի) առաջնորդ էր դառնում և զորքը տանում էր օսմանցիների վրա: Եվ այսպես սիրվեց խանի կողմից իր քաջության համար: Սա ուներ Ասլան անունով մի եղբայր. սա լսեց, թե իր եղբայրը խանի կողմից մեծարվել է, ուստի ինքը նույնպես ապստամբեց և ամբողջ ընտանիքով բաժանվելով եկավ եղբոր մոտ: Եղբայրը նրան առավ տարավ խանի մոտ: Եվ երկուսն էլ ծառայում էին նրա առջև:

Ամիրգունա խանից հետո Թահմազ Ղուլի բեկը նստեց: Սա նույնպես սիրեց նրանց և Մուրադ բեկին դարձրեց երկրորդը, իսկ